ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 31-Ն

15 սեպտեմբերի 2015թվական

գ. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015-2018ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 2 կետով և 53-րդ հոդվածի 2-րդ մասով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի 2015-2018թվականների սոցիալ - տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ձեռնպահ-0 Կողմ-5 Դեմ-0

Ռ. Հարությունյան կողմ _____

Ղ. Ղահրամանյան կողմ _____

Գ. Վարդանյան կողմ _____

Ա. Կարոյան կողմ _____

Մ. Մովսիսյան կողմ _____

Անուշավան համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

15 Սեպտեմբերի 2015թվական
գ. Անուշավան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ
Սեպտեմբերի 15-Ի ԹԻՎ 31-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

Անուշավանի գյուղական համայնքի 2015-2018 թթ.
Սոցիալ - տնտեսական զարգացման

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝
Անուշավանի գյուղական
համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան
Հաստատվել է Անուշավանի գյուղական համայնքի ավագանու
15-09-2015թ-ի թիվ 8 նիստում.

Անուշավան – 2015Թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է քառամյա ծրագիրը.

1. Համայնքի իրավիճակի գնահատում
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայքնի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:
6. Եզրափակում:

Հավելված -1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:

Հավելված - 2. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

ԻՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Քառամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համայնքի իրավիճակի գնահատումը համայնքը բնութագրող և ներկայացվող հատկանիշների ու բաղադրիչների վերլուծությունն է:

Նկատի ունենալով համայքնի ստեղծման, զարգացման սոցիալ - տնտեսական և մի շարք այլ առանձնահատկություններ, Անուշավանի համայնքի գնահատման ցուցանիշները կարելի է դասակարգել հետևյալ բաղադրիչների՝

1. Պատմական տեղեկություններ համայնքի մասին:
2. Աշխարհագարական դիրքը և բնակլիմայական պայմանները:
3. Ժողովրդագրություն:
4. Համայնքի տնտեսության վերլուծությունը, սոցիալական վերլուծություններ:
5. Տեղական ինքնակառավարման համակարգի վերլուծություն:
6. Քաղաքաշինություն:

Այս թվարկումից առանձնացնում ենք համայնքի տնտեսության վերլուծության բաժինը, որն իր հերթին կարելի է բաղդատել առանձին ենթաբաժինների՝

1. Գյուղատնտեսության արտադրության գնահատական:
2. Համայնքի արդյունաբերական պոտենցիալ:
3. Առողջապահական, մշակութային, և սպորտի համակարգի վերլուծություն:
4. Համայքնի հիմնական միջոցները և դրանց փաստացի ֆիզիկական վիճակի վերլուծություն:

Կատարենք Անուշավանի համայնքի իրավիճակի գնահատումը՝ ըստ մեր թվարկած դասակարգման բաղադրիչների՝ առանձին - առանձին:

1.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Շիրակի մարզի Անուշավան համայնքը գտնվում է Շիրակի մարզում, Հայաստանի Հյուսիս-Արևմտյան կողմում: Գյուղի տերիտորիան Հյուսիսից սահմանակից է Փանիկի, Արևմուտքից՝ Նոր-Կյանքի, Արևելքից՝ Գետափի, Հարավ- Արևելքից՝ Սարալանջի, Հարավից՝ Արթիկի վարչական տարածքներին: Մարզկենտրոնից հեռավորությունը 25կմ է, իսկ նախկին Արթիկի շրջկենտրոնից՝ 6կմ:

Գյուղը հիմնադրվել է 18-րդ դարի 2-րդ կեսին՝ Ալաշկերտից և Բասենից գաղթած հայերի կողմից: Սկզբում անվանվել է Մուղալես, Բեքյանդ, այնուհետև՝ Փոքր-Պարնի: Գյուղի աշխարհագրական դիրքը լեռնային է՝ ծովի մակերևույթից բարձրությունը 1750մ է:

Անուշավան գյուղի տարածքը 1160հա է, օդի տարեկան միջին ջերմաստիճանը 2-8^0, Օդի բացարձակ մինիմալ ջերմաստիճանը -35^{0}C, բացարձակ մաքսիմալ ջերմաստիճանը՝ +34^{0}C, տարեկան միջին մթնոլորտային տեղումների քանակը 350-600մմ: Գյուղի տարածքը գտնվում է սեյսմիկ գոտում, գյուղը տուժել է 1988թ. երկրաշարժից:

Գյուղի բնակչությունը 2015թ հունվարի 1-ի դրությամբ 2116մարդ, որից տղամարդ -1073 կանայք - 1043, ընտրողների թիվը - 1564 մարդ, ծխերի թիվը - 524:

Համայնքի ղեկավարի ընտրությունը կատարվել է 2015թ. մարտի 15-ին, գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմում աշխատում է 5 աշխատող: Համայնքային կազմակերպություններն են մանկապարտեզը, մշակույթի տունը, գրադարանը:

Համայնքը առաջնահերթ կարիք ունի ոռոգման և խմելու ջրի, ջրամատակարարման վերականգման, ներհամայնքային ճանապարհների, նախադպրոցական հիմնարկի, մշակույթի տան նորոգման, գյուղ մթերքների արտադրության կազմակերպման, նոր աշխատատեղերի ստեղծման:

Համայնքի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, հացահատիկային կուլտուրաների մշակությունը և անասնապահությունը:

1.2.ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անուշավան գյուղը գտնվում է Արագած լեռան լանջին, ծովի մակարդակից 1750մ բարձրության վրա, աշխարհագրական դիրքը լեռնային է: Տարվա եղանակների բաշխվածությունը խիստ անհամաչափ է: Ձմռան տևողությունը մոտ 6 ամիս է, խստաշունչ՝ մինչև -25 աստիճան: Ամռանը զով է: Համայնքը գտնվում է սեյսմիկ գոտում:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղի բնակչությունը 2011թ-ի հունվարի 1-ի տվյալներով կազմում է 2116 մարդ, որից

- տղամարդ - 1073
- կին - 1043
- դպրոցական - 236
- նախադպրոցական - 191
- 60 տարեկանից բարձր- 939
- 18-60 տարեկան - 714
- բարձրագույն կրթությամբ - 113
- կենսաթոշակառուներ - 365
- «Փարոս» ծրագրում ընդգրկված ընտանիքներ - 118
- Ընտանիքների թիվը - 524

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակարանային ֆոնդը ընդգրկում է 83 915 քմ. կամ 484 բնակելի միավոր, որոնցից 100 %-ը հանդիսանում է բնակչության անձնական սեփականությունը:

ՀԱՄՆԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական դիրքը, երկաթուղային կայարանի գոյությունը, Արթիկ քաղաքին սահմանակից լինելը:
- Մարդկային և աշխատանքային ռեսուրսների առկայությունը:
- Տրանսպորտի և մեքենա մեխանիզմների առկայությունը:
- Համայնքի ղեկավարի աշխատակազմի համակարգված և թափանցիկ գործունեությունը:
- Գյուղատնտեսության համար պիտանի հողերի առկայությունը:
- Համայնքի գազաֆիկացված լինելու հանգամանքը:
- Զարգացած կրթական համակարգի առկայությունը:
- Համայքնքի հեռախոսաֆիկացված լինելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը:
- Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը:
- Արտագաղթի ծավալների աճը:
- Գործազրկության առկայությունը:
- Բնակլիմայական վատ պայմանները /կարկտահարություն, երաշտ, սելավներ, պտտաքամիներ/:
- Ազգաբնակչության սոցիալ - տնտեսական պայմանների ցածր մակարդակը և անվճարունակությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի վտանգ սպառնացող փոփոխություններն են՝

1. Տնտեսական բնույթի փոփոխություններ
2. Տեխնածին բնույթի փոփոխություններ
3. Բարոյահոգեբանական բնույթի փոփոխություններ

1.Տնտեսական բնույթի փոփոխություններն են.

ա/ գյուղ. մթերքների արտադրության տեմպերի նվազումը:

բ/ գյուղ. մթերքների իրացման դժվարությունները

գ/ արտադրական ձեռնարկությունների հարկադրական պարապուրդը

դ/ գյուղգործիքների և մեխանիզմների ֆիզիկական և բարոյական մաշվածությունը

ե/ բյուջեի թերակատարումը

2. Տեխնածին բնույթի փոփոխություններն իրենց մեջ ներառում են.

ա/ երկրաշարժեր

բ/ հեղեղումներ

գ/ կարկտահարություն

դ/ ուժեղ քամիներ

ե/ հրդեհներ

զ/ ցրտահարումներ

է/ երաշտ

ը/ ենթակառույցների գործունեության խափանումներ

3. Բարոյահոգեբանական բնույթի փոփոխություններն են.

ա/ արտագաղթ

բ/ գործազրկությունը

գ/ արտակարգ իրավիճակները

դ/ ժողովրդագրության բացասական հաշվեկշիռը

ե/ տարադրամի արժեքի անկում գյուղ. մթերքների իրացման ժամանակահատվածում

զ/ վառելանյութի գների կտրուկ աճ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակահատվածում

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Անուշավանի համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացվում է երկու մակարդակներում՝

ա/ Համայնքի ղեկավար

բ/ Համայնքի ավագանի

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, իրավունքների և պարտականությունների կարգը սահմանված է «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքով:

Համայնքի ղեկավարն իր գործունեությունն իրականացնում է իր և իր աշխատակազմի միջոցով, որի իրավունքների և պարտականությունների խնդիրը համակարգվում համապատասխան կանոնադրությամբ և «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքով:

Անուշավանի համայնքի ղեկավարի աշխատակազմի բնութագիրը բերվում է ստորև՝

Հ/հ	Տվյալներ / Անուն, ազգանուն	ծննդ. թիվը	Կրթություն	Մասնագ.	Զբաղ. պաշտ.	ՏԻՄ աշխ փորձ
1	Երվանդ Հակոբյան	1959	բարձրագ.	տնտեսագետ	համայնքի ղեկավար	14
2	Աննա Աղաբաբյան	1982	բարձրագ.	տնտեսագետ	2-րդ կարգի մասնագետ	1
3	Հրաչյա Ղահրամանյան	1958	բարձրագ.	տնտեսագետ	գլխավոր մասնագետ	19
4	Ռոբերտ Վարդանյան	1990	Բարձրագ.	իրավագետ	1-ին կարգի մասնագետ	1
5	Միքայել Դավթյան	1964	միջն. մասն.	տեխնիկ-մեխանիկ	1-ին կարգի մասնագետ	8

Անուշավանի համայնքի ավագանին ընտրվել է 2011թ-ի դեկտեմբերի 16-ին: Համայնքի ավագանին կազմված է հինգ անդամներից:

Համայնքի ավագանին, ելնելով համայնքի շահերից, համայնքի ղեկավարի հետ իրականացնում է որոշակի աշխատանքներ: Անուշավանի համայնքի ավագանին բարձր պատասխանատվությամբ է վերաբերվում համայնքի բյուջեի ձևավորման, բյուջեի կատարման, ծախսային մասերը հասարակությանը ներկայացնելու և դրանք վերահսկելու իր պարտականություններին:

Ներկայացնում ենք համառոտ տեղեկատվություն Անուշավանի համայնքի ավագանու մասին:

Հ/հ	Տվյալներ / Անուն, ազգանուն	Կրթություն	Մասնագիտություն	ՏԻՄ-ում աշխատանք. փորձը
1	Ռաֆիկ Հարությունյան	միջնակարգ	գազի հսկիչ	7
2	Գնել Վարդանյան	միջն. մասն.	ռադիոտեխնիկ	7
3	Ղարիբ Ղահրամանյան	միջնակարգ	-	7
4	Մկրտիչ Մովսիսյան	միջն. մասն.	մեխանիկ	4
5	Աշոտ Կարոյան	միջն. մասն.	մեխանիկ	14

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումն և կանխատեսումը: Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքում այն ունի հետևյալ պատկերը.

N	Եկամուտի տեսակը	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
		Փաստ.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
	Եկամուտներ ընդամենը	39824,0	43734,0	44860,0	45870,0	46980,0
1.	Հարկային եկամուտներ ու տուրքեր	7306,0	7732,0	7740,0	7850,0	7960,0
1.1.	Հողի հարկ	3326,0	3240,0	3240,0	3240,0	3240,0
1.2.	Գույքահարկ	3897,0	4302,0	4400,0	4500,0	4600,0
1.3.	Տեղական տուրքեր	83,0	90,0	100,0	110,0	120,0
1.4.	Ոչ հարկային եկամուտներ	1020,0	1020,0	1020,0	1020,0	1020,0
2.	Պահուստի հողերի վճարներ	1020,0	1020,0	1020,0	1020,0	1020,0
2.1.	Գույքի վարձակալության վճարներ					
2.2.	Տեղական վճարներ					
2.3.	Այլ ոչ հարկային եկամուտներ					
3.	Պաշտոնական տրանսֆերտներ	31498,0	35082,0	36100,0	37000,0	38000,0
4.	Տարեսկզբի ազատ մնացորդ					

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015-2018թթ. ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

N	Ցուցանիշները	Չափի միավոր	2014թ. փաստ.	2015թ. կանխ.	2016թ. կանխ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8
1.	Համայնքի տարածքը	հա	1134,5	1134,5	1134,5	1134,5	1134,5
2.	Բնակչության թիվը	մարդ	2116	2114	2110	2110	2115
3.	Ծնունդ	մարդ	34	25	23	21	20
4.	Մահ	մարդ	25	25	17	17	17
5.	Աշխատանքի ռեսուրսներ, այդ թվում՝	մարդ	1252	1260	1265	1270	1280
	ա/զբաղվածներն ըստ տնտեսության ճյուղերի	մարդ					
	- արդյունաբերություն	մարդ					
	- գյուղատնտեսություն	մարդ	1058	1065	1080	1080	1100
	- առևտուր	մարդ	5	6	6	6	6
1.	Բյուջետային հիմնարկնե-րում աշխատողները	մարդ	84	85	85	85	85
	բ/ արտադրությունից կտրված սովորողները	մարդ	26	28	30	30	30
6	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը այդ թվում՝	հատ	5	6	6	6	6
	-առևտրի օբյեկտներ	հատ	5	6	6	6	6
7	Պահուստային հողեր և արոտավայրեր		38/282	38/282	38/282	38/282	38/282
8.	Միջհամայնքային ճանապարհների երկարությունը	կմ	3	3	3	3	3
9.	Ներհամայնքային ճանապարհների երկարությունը, այդ թվում՝	կմ	30	30	30	30	30
	- գրունտային փողոցներ	կմ	29	28	27	26	25
10.	Բնակ. ֆոնդ /առանձնատուն/ այդ թվում՝	հատ	484	485	487	489	490
	- պետական	հատ					
	- մասնավոր	հատ	484	485	487	489	490
11.	Բնակարանի կարիք ունեցող ընտանիքների	հատ	70	73	76	80	85

	թիվը						
12.	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ/օր	120	150	150	150	150
13.	Նախադպրոցական հիմնարկների թիվը	հատ	1	1	1	1	1
	- երեխաների թիվը	մարդ	65	65	65	65	65
14.	Դպրոցների թիվը, որից՝	հատ	1	1	1	1	1
	-միջնակարգ սովորողների թիվը	մարդ	236	235	230	230	230
	Ութամյա թիվը	մարդ					
15.	Երաժշտական դպրոց	հատ					
	- սովորողների թիվը	մարդ					
16.	Մշակույթի տան գործող խմբերի թիվը	հատ					
	- ներանցում հաճախորդների թիվը	մարդ					
17	Հիվանդանոց	հատ					
	- բժիշկների թիվը	մարդ					
	- կրտսեր բուժանձնակազմ	մարդ					
18.	«Փարոս» համակարգում գրանցված ընտանիքների թիվը	հատ	118	120	120	120	120
19.	Բնակչության մեկ շնչին ընկնող համայնքի բյուջետային եկամուտները	հազար դրամ	18,8	20,7	21,3	21,7	22,2

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ» ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵԱԿԵՐՊՈՒՄ

Ծրագիր 1. -Անուշավանի հարավային թաղամասի մետաղական ջրագծերը պոլիէթիլենային խողովակներով փոխարինում:

Ծրագրի նկարագիրը - Կկատարվի 1500գծմ մետաղական խողովակների փոխարինում պոլիէթիլենային75մմ տրամագծով խողովակներով, ծրագրից օգտվող շահառուների թիվը կլինեն համայնքի 800 շահառուներ, ծրագրում կընդգրկվեն 5 բանվորներ, կծախսվի 150մարդ-օր: Նվազագույնի կհասնի խմելու ջրի կորուստները, թաղամասի բնակչությունը կստանա սանիտարական տեսակետից մաքուր և շուրջօրյա ջրամատակարարում:

Նպատակը - Նշված թաղամասերի ջրագծերը կառուցված են 50-60 ական թթ-ին: Փտել են, շարքից դուրս եկել, անհրաժեշտ է հին ջրագծերը վերանորոգել նոր պելիէթիլենայնին խողովակներով:

Ֆինանսավորման աղբյուրը – ՎՕՍ Բարեգործություններ կորպորացիա ,համայնքային բյուջեի «Կոմունալ ծառայություններ», ջրամատակարարում հոդվածից: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 4 781 900 դրամ, որից 4 520 000 դրամ ՊՀԾ-ի «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրով, 261 900 դրամ համայնքային ներդրում:

Ծրագրի իրացման ժամկետը - 2015թ-ի Մայիս - Սեպտեմբեր:

Պատասխանատու - Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ՝ Ռոբերտ Վարդանյան:

Ծրագիր 2. - Անուշավանի մանկապարտեզի շենքի խոհանոցային բլոկի և սանհանգույցների նորոգում:

Ծրագրի նկարագիրը - Անուշավանի մանկապարտեզում աշխատում են 12 աշխատողներ, մանկապարտեզ են հաճախում միջինը 70-80 երեխաներ: Շենքի առաջին հարկը վերանորոգված է, գազաֆիկացված, անցկացված է ջեռուցման լոկալ համակարգ խոհանոցային բլոկում անհրաժեշտ է կատարել միջնորմներով առանձնացումներ,սանիտարական հանգույցներում ստանդարտներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է ասիական տիպի զուգարանակոնքերը փոխարինել եվրոպական տիպի զուգարանակոնքերով, ջրացնցուղային տակդիրներով տաքնսառը ջրամատակարարմամբ:

Նպատակը- Ստեղծել սանիտարահիգենիկ բավարար պայմաններ :

Ֆինանսավորման աղբյուրը - Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 800 000դրամ պետական բյուջեի և համայնքային ներդրումների միջոցներով:

Ծրագրի իրացման ժամկետը - 2015թ-ի Ապրիլ - նոյեմբեր:

Պատասխանատու - նախադպրոցական հիմնարկի տնօրեն Օվսաննա Սարոյան:

Ծրագիր 3. - Անուշավանի մշակույթի տան ցանկապատի կառուցում:

Ծրագրի նկարագիրը – Անուշավան համայքի կենտրոնի բարեկարգման, կանաչապատման և հանգստի գոտի ստեղծելու համար անհրաժեշտ է մշակույթի տան դիմացի տարածքը ցանկապատել, բերել պատշաճ տեսքի: Ցանկապատը կառուցվելու է մետաղական խողովակներով և անկյունակներով՝ 110գծմ: Ցանկապատին կից կառոցել սպասասրահ: Նախահաշվային արժեքը կազմում է 800 000դրամ:

Նպատակը – Գյուղը ավելի բարետես և բարեկարգ դարձնել:

Ֆինանսավորման աղբյուրը - Անուշավանի համայնքային բյուջե:

Կատարման ժամկետը - 2015թ-ի Մայիս - Հոկտեմբեր:

Պատասխանատու - Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ՝ Միքայել Դավթյան:

Ծրագիր 4. - Անուշավանի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում:

Ծրագրի նկարագիրը – Անուշավանի վարչական կենտրոնից մինչև Անուշավանի վարչական սահմանը ասֆալտապատ կենտրոնական ճանապարհը կարիք ունի ասֆալտբետոնյա հիմքով փոսալցման 110մ^2 ընդհանուր մակերեսով: Ներհամայքնային թիվ 22, 23, 29, 30 փողոցները 5000մ^2 ընդհանուր մակերեսով կոպճա-ավազային խառնուրդով փոսալցելու, հարթեցնելու, սելավատար կողային առուների կառուցում: 2015թվականի համայնքային բյուջեով այս ծրագրի աշխատանքների կատարման համար նախատեսված է 2 500 000 դրամ: Ծրագիրը բավարար անցանելի կդարձնի ներհամայնքային ճանապարհները, որի շահառուներն են համայնքի բնակչության կեսից ավելին:

Նպատակը - Անձրևաջրերից և սելավներից տարեց-տարի շարքից դուրս եկած անբարեկարգ և անանցանելի դարձած կենտրոնական և ներհամայնքային ճանապարհները առավել բավարար բարեկարգ և անցանելի դարձնելն է:

Ֆինանսավորման աղբյուրը - Անուշավանի համայնքային բյուջե «Ճանապարհների նորոգում» հոդվածից:

Կատարման ժամկետը - 2015թ. Մայիս-Հուլիս:

Պատասխանատու - Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ՝ Միքայել Դավթյան

Ծրագիր 5. – Հակակարկտային կայանների տեղադրում:

Ծրագրի նկարագիրը – Անուշավան համայնքը վերջին մի քանի տարիների ընթացքում հաճախ է ենթարկվում ուժեղ կարկտահարությունների: Յուրաքանչյուր տարի բնակչությունը կարկտահարությունից կրում է 100ից 150մլն դրամի վնաս: Ամբողջ համայնքի ծածկույթը ապահովելու համար անհրաժեշտ է տեղադրել 6 հակակարկտային կայաններ: Համայնքը խնդրանքով բազմիցս դիմել է կառավարություն հակակարկտային կայանների ձեռքբերման համար ֆինանսավորում տրամադրելու համար: Նախահաշվով 6 կայանների համար պահանջվում է 24մլն դրամ:

Նպատակը - կմեղմի կարկտահարության վտանգը համայնքում:

Ֆինանսավորման աղբյուրը – Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, Անուշավան համայնքային բյուջե, անհատ բարերարներ:

Կատարման ժամկետը - 2015թ-ից 2018թ-ը:

Պատասխանատու - Համայնքի ղեկավար՝ Երվանդ Հակոբյան:

Ծրագիր 6. - Անուշավանի մշակույթի տան դռների և պատուհանների փոխարինում:

Ծրագրի նկարագիրը - Անուշավանի մշակույթի տունը կառուցվել է 1969թվականին, գտնվում է գյուղի կենտրոնում, երկհարկանի կառույց է, ունի 400 նստատեղով կինոդահլիճ, սպորտ դահլիճ, փոքր նիստերի դահլիճ, կոնսերվացված լինելու պատճառով փաստորեն իրեն նպատակին չի ծառայում: Մշակույթի տան հիմնանորոգման խնդիրը պետական հոգածության խնդիր է: Պետական ծրագրով փոխվելէ տանիքի ազբոշիֆերյա ծածկը :Շենքի դռները և պատուհանները լրիվ շարքից դուրս են եկել :Անհրաժեշտ է փոխարինել 112մ2 դռներ և պատուհաններ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3 900 000 դրամ: Ծրագրի շահառուները ամբողջ համայնքի 2100 բնակչությունն է:

Նպատակը - Մշակույթի տունը շահագործվել է 1969թ-ին, կապիտալ և ընթացիկ նորոգման չի ենթարկվել: Համայնքում մշակութային կյանքը ակտիվացնելու համար անհրաժեշտություն կա մշակույթի տան հիմնանորոգման:

Ֆինանսավորման աղբյուրը – Անհատ բարերարներ, մասամբ համայնքային բյուջե:

Կատարման ժամկետը - 2016թ. Հունվար- Դեկտեմբեր

Պատասխանատու - Աշխատակազմի քարտուղար՝ Միքայել Դավթյան:

Ծրագիր 7. – Դպրոց տանող ճանապարհի 100մ հատվածի տուֆ քարով սալապատում:

Ծրագրի նկարագիրը- Անուշավան- Գետափ ասֆալտապատ ճանապարհից մինչև դպրոց 100մ հատվածի գրունտային ճանապարհը անձրևներից անընդհատ շարքից դուրս է գալիս, երեխաների համար ստեղծում անանցանելի վիճակ: Անհրաժեշտ է կառուցել 100մ երկարությամբ, 3մ լայնությամբ տուֆ քարով սալապատ, երկու կողմերից ջրահեռացումով ճանապարհ: Նախահաշվային արժեքը կազմում է 950 000դրամ:

Նպատակը- Դպրոց հաճախող երեխաների համար ստեղծել բարենորոգ, բարեկարգ ճանապարհ:

Ֆինանսավորման աղբյուրը – Անուշավանի համայնքային բյուջեի ճանապարհների նորոգում հոդվածից:

Կատարման ժամկետը - 2016թ. Ապրիլ- հոկտեմբեր:

Պատասխանատու - Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ՝ Միքայել Դավթյան:

Ծրագիր 8. - Ոռոգման ներքին ցանցի անցկացում:

Ծրագրի նկարագիրը - Գետափ համայնքից Անուշավան համայնքի ոռոգման ներքին ցանց 200գծմ հատվածում ոռոգման ջուրը անցնում է հողային հունով, ինչպես նաև Անուշավանի արևելյան թաղամասից հարավային թաղամաս ոռոգման ջրատարի 800գծմ հատվածից 300գծմ կիսախողովակները բացակայում են, ստեղծում են ոռոգման ջրի աննպատակ կորուստներ, ինչպես նաև անհնարին են դարձնում ոռոգման ջրի մատակարարումը հարավային թաղամասում: Կկառուցվի 500մ կիսախողովակներով ընդհանուր երկարությամբ ոռոգման ջրատար, որի նախահաշվային արժեքը կկազմի 5 800 000դրամ:

Նպատակը-Ոռոգման ջուրը արդյունավետ օգտագործելու, կորուստները պակասեցնելու համար անհրաշեշտ է ոռոգման ներքին ցանց անցկացնել կիսախողովակներով:

Ֆինանսավորման աղբյուրը - «Շիրակի մարզի ՋՕԸ, Անուշավանի համայնքային բյուջե, ոռոգման համակարգերի նորոգում և սպասարկում

մասամբ համայնքային բյուջե:

Կատարման ժամկետը - 2016թ-2017թթ.:

Պատասխանատու - Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ՝ Ռոբերտ Վարդանյան

Ծրագիր 9. –Գերեզմանատների գլխավոր հատակագծի պատվիրում, նոր գերեզմանատան հողահատկացում, ցանկապատի կառուցում, տարածքի բարեկարգում, ջրագծի անցկացում:

Ծրագրի նկարագիրը – Անուշավանի գերեզմանատները չունեն գլխավոր հատակագծեր: Անհրաժեշտություն կա նոր գերեզմանատան: Պետական չափանիշների համապատասխանող գերեզմանատուն կառուցելու համար անհրաժեշտ է տարածքը ցանկապատել, բարեկարգել, անցկացնել ջրագիծ: Նախահաշվային արժեքը կազմում է 4 200 000դրամ:

Նպատակը - Քանի որ հին գերեզմանատներում որոշ ժամանակ հետո հնարավոր չի լինի կազմակերպել թաղումներ, անհրաժեշտություն կա նոր գերեզմանատան կառուցման:

Ֆինանսավորման աղբյուրը - Անուշավանի համայնքային բյուջե, Անուշավան համայնքի բնակչության կողմից հանգանակվող գումարներ:

Կատարման ժամկետը - 2017թ. ապրիլ-դեկտեմբեր:

Պատասխանատու - Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ՝ Միքայել Դավթյան:

Ծրագիր 10. – Անուշավանի մանկապարտեզի շենքի երկրորդ հարկի դռների և պատուհանների փոխարինում :

Ծրագրի նկարագիրը – Անուշավանի մանկապարտեզի շենքը կառուցվել է 1987թ 1-ին հարկը գյուղապետարանի միջոցներով լրիվ վերանորոգվել է: Շենքը լրիվությամբ շահագործելու համար անհրաժեշտ է փոխարինել 2-րդ հարկի դռները և պատուհանները85մ2 ընդհանուր մակերեսով:Նախահաշվային արժեքը կազմում է 2.800.000 դրամ:

Ծրագրի նպատակը – Անուշավանի մանկապարտեզի շենքը շահագործել ամբողջ հզորությամբ, որը թույլ կտա ավելացնել մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը:

Ֆինանսավորման աղբյուրը- Բարեգործական հիմնադրամներ, մասամբ համայնքային բյուջե:

Կատարման ժամկետը – 2018թ ապրել-նոյեմբեր

Պատասխանատու- Անուշավանի նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն՝ Օվսաննա Սարոյան:

Ծրագիր 11. –Ոռոգման փակ համակարգի անցկացում

Ծրագրի նկարագիրը –Արթիկի տարածաշրջանի Անուշավան, Արևշատ, Գետափ, Մեղրաշեն, Սպանդարյան, Փանիկ և Մ. Մանթաշ համայնքների նորմալ ոռոգման ջրամատակարարում ապահովելու համար10կմ երկարությամբ ոռոգման փակ համակարգ պետական բյուժեի միջոցներով կառուցելու նպատակով դիմել են կառավարություն, որևէ ծրագրում ընդգրկելու նպատակով :Կառուցվելիք ջրատարի երկարությունը 10.7կմ 5.5 կմ փակ բաժանարար խողովակաշարեր ,մոտավոր հաշվարկներով շինարարության ամբողջ արժեքը կկազմի շուրջ 1.1 միլյարդ դրամ :

Ծրագրի նպատակը – Նշված միջոցառումը թույլ կտա տնտեսել ոռոգման ջուրը բարձրացնել համայնքի հողատարածքների ջրապահովվածությունը,կիրառել ավելի ժամանակակից ոռոգման եղանակներ:

Ֆինանսավորման աղբյուրը- ՀՀ պետական բյուջե, մասսամբ համայնքային ներդրում :

Կատարման ժամկետը – 2017-2018 թթ

Պատասխանատու- Անուշավան համայնքի ղեկավար Ե. Հակոբյան

Հավելված 1.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԵՄԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը ՀՀ կառավարության 14-03-1997թ-ի թիվ 51 որոշմամբ համայնքի օգտագործման հանձնված և գրանցված միջոցներն են.

h/h	Գույքի անվանումը	Քանակը	Գույքի փաստացի վիճակը
1	Մշակույթի տուն	1	անբավարար
2	Գյուղապետարանի շենք	1	բավարար
3	Ճանապարհային ցանց	30կմ	անբավարար
4	Ջրամատակարարման համակարգ	18կմ	բավարար
5	Կամուրջ	2	բավարար
6	Գերեզմանատուն	2	բավարար
7	Նախադպրոցական հիմնարկի շենք	1	բավարար

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքը 2015-2018թթ. քառամյա ծրագիրը կազմված է հաշվի առնելով տեղական բյուջեի եկամուտների միանգամայն անբավարարությունը, ինչպես նաև պետական բյուջեից և բարեգործական տարբեր հիմնադրամներից ակնկալվող ֆինանսական միջոցները:

Ծրագրի իրականացումը անխզելիորեն կապված է պետական աջակցության հետ, որի համար կան որոշակի ակնկալիքներ: Կարևորվում է նաև առանձին հիմնադրամների հետ համագործակցությունը: Համայնքը դեռևս ունի չլուծված և լուծում պահանջող խնդիրներ: Գյուղապետարանը հնարավոր ամեն ինչ անում է լուծելու սեփական հիմնախնդիրները, գտնելու եկամուտի նոր աղբյուրներ:

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը կազմված է՝ օգտագործելով ՀՄՆՀ-ի աջակցությամբ ՄԶՄԿ կողմից իրականացված «Տեղական ինքնակառավարման մարմինների ուսուցում» ծրագրի նյութերը: